ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-15 ՂԱԶԱԽՍՏԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

1) Կարեն Գասպարյան

2) Սուրեն Մամյան

3) Արմինե Ստեփանյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

1) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի պետ, վարչության պետի պարտականությունները կատարող

2) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքաբանական փորձաքննության բաժնի պետ

3) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընդերքի վարչության ընդերքօգտագործման ոլորտի քաղաքականության մշակման բաժնի ավագ մասնագետ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ղազախստան՝ Ալմաթի քաղաք

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Արժույթի միջազգային հիմնադրամ (IMF); Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն (CCAMTAC):

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)

Գործուղման նպատակն էր մասնակցել «Արդյունահանող ճյուղերի հարկային քաղաքականություն» թեմայով աշխատաժողովին:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

2024 թվականի մարտի 11-ին քննարկվեց, թե ինչպես է որոշվում հարկային քաղաքականությունը, ինչու է արդյունահանող ճյուղերի համար անհրաժեշտ հատուկ

հարկային ռեժիմ: Քննարկվեցին հանքարդյունաբերության և նավթի արդյունաբերության առանձնահատկությունները: Ծանոթացանք երեք հիմնական հարկաբյուջետային ծրագրերի (երբեմն խառը) հետ:

2024 թվականի մարտի 12-ին ծանոթացանք շահույթի վրա հիմնված հարկաբյուջետային մեխանիզմների հետ, թե որոնք են եկամտի հիմնական աղբյուրները շատ երկրների համար և կոնկրետ օրինակների վրա պարզաբանվեցին տարբեր նախագծերի մոդելավորման մոտեցումները:

2024 թվականի մարտի 13-ին ծանոթացանք եկամտաբերության ցուցանիշների, պետական եկամուտների ստացման ժամկետների հետ: Քննարկվեցին այն ցուցանիշները, որոնք հիմնականում օգտագործվում են հարկային ռեժիմի վերլուծության մեջ, ծանոթացանք թե ինչ գործիքներ պետք է ներառվեն լավ հարկային քաղաքականության մեջ:

2024 թվականի մարտի 14-ին կատարվեցին խմբային վարժություններ՝ սահիկաշարի պատրաստում, որտեղ պետք էր կատարել արդյունահանող ճյուղերի հարկաբյուջետային ռեժիմի վերլուծություն՝ օգտագործելով BADO մոդելները: Կոնկրետ օրինակների վրա պետք էր անցկացնել տնտեսական պարամետրերի վերլուծություն մինչև հարկումը, գոյություն ունեցող ռեժիմի վերլուծություն և ստեղծել 2 լրացուցիչ լավագույն հարկաբյուջետային ռեժիմներ:

2024 թվականի մարտի 15-ին խմբերի մասնակիցները ներկայացրեցին իրենց կողմից պատրաստած սահիկաշարերը և ստացան հավաստագրեր աշխատաժողովին մասնակցելու վերաբերյալ:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Աշխատաժողովի մասնակիցները՝ ողջունելով միմյանց, ներկայացրեցին իրենց երկրների արդյունահանող ճյուղերի առանձնահատկությունները, ծանոթացան և քննարկեցին վերը նշված թեմաները:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

-

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔԸ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

-

10. ՍՏՈՐԱԳՐԵՑԻՆ, ԱՄՍԱԹԻՎԸ

Կարեն Գասպարյան

Սուրեն Մամյան

Արմինե Ստեփանյան